ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Ա ՊԱՊԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Ա ՊԱՊԻՆ

Վատիկան—Հռոմ

Ուրախ սրտով շնորհավորում ենք Ձերդ Սրբության ընտրությունը իբրև Գերագույն Պետ Հռոմեական կաթոլիկ մեծ եկեղեցու, ընտրություն, որով մի նոր էջ է բացվում Հռոմի առաքելական սուրբ Աթոռի մոտ երկհազարամյա պատմության մատյանում:

Մաղթում ենք, որ Տերը Ձեզ պարգևի կենաց երկար տարիներ ու մշտանորոգ ներշնչումներ, որպեսզի փառավորեք ձեր սուրբ եկեղեցին աստվածահաճո նորանոր իրագործումներով և Ձեր նախորդների ճանապարհով դառնաք մի առաքյալ աշխարհի խաղաղության և բոլոր ազգությունների համերաշխ գործակցության:

Քրիստոնյա Հայաստանից և սուրբ Էջմիածնից ընդունեցեք եղբայրական հարգալից սիրո Մեր ողջույնը:

Աստուծո սուրբ Հոգին թող մնա Ձեզ միշտ առաջնորդող լույս: Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
30 օգոստոս 1978 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Ա ՊԱՊԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՆՐԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԻ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Խորապես զգացված ենք Մեր անձի նկատմամբ Ձերդ Սրբության արտահայտած զգացմունքների համար այն պահին, երբ Տերը վստահում է Մեզ այս ծանր առաքելությունը՝ ի ծառայություն Իր եկեղեցու:

Հայտնում ենք Ձեզ Մեր շնորհակալությունը և վստահեցնում, որ Մեր կամքն է՝ անվարան առաջ ընթանալ այն ճանապարհով, որը մեզ պետք է տանի մեր եկեղեցիների միջև ամբողջական հաղորդության վերհաստատմանը:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Ա

Վատիկան,
9 սեպտեմբեր 1978 թ.